ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՑԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Հացիկ համայնք, 16 փողոց, 1շենք, 093 08 08 48
hacikiguxapetaran@inbox.ru

«11» սեպտեմբերի 2018 թվականի N 188

ՀՀ Արմավիրի մարզպետ
պարոն Գ.Միրիջանյանին

Հարգարժան պարոն մարզպետ.

Ձեզ է ներկայացվում 2018 թվականի սեպտեմբերի 3-10 Հացիկ համայնքի ղեկավարի կողմից արձակված կարգադրությունները և ընդունված որոշումները:

Նշված ժամանակահատվածում ընդունվել է 3 որոշում, կարգադրություն չի արձավել:

Առդիր 5 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. Եղիազարյան

11.09.2018թ.
գ. Հացիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՑԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Հացիկ համայնք, 16 փողոց, 1շենք, 093 08 08 48
hacikiguxapetaran@inbox.ru

«05» սեպտեմբերի 2018 թվականի

ՈՐՈՇՈՒՄ N 5

ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՉՊԱՀՊԱՆՎԱԾ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՏԱՆ ԵՎ ՇԵՆՔ – ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԴԱՎԻԹ ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Արմավիրի մարզի Հացիկ համայնքի բնակիչ Դավիթ Իսկանդարյանը դիմել է Արմավիրի մարզ գյուղ Հացիկ, -ոդ փողոց 9 շենք 1 հասցեում գտնվող օրինական տնամերձ հողամասի վրա կառուցված ըստ ժառանգության իրավունքի վկայագրի ձեռք բերված բնակելի տան և շենք-շինությունների նկատմամբ իրավունքների վերականգնելու խնդրանքով, որը օրենքի ուժով կարող է փոխանցվել անհատույց սեփականության իրավունքով:

Հաշվի առնելով, որ բնակելի տունը և օժանդակ շինությունները կառուցվել են մինչև 15.05.2001թ., հողամասը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1,2,3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, չի խախտում այլ անձանց իրավունքները, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 912-ն որոշման կարգով սահմանված և սույն որոշման 22-րդ կետի 1-ին ենթակետերով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 17-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով. հիմք ընդունելով Դավիթ Իսկանդարյանի դիմումը

Որոշում եմ

1. Վերականգնել Արմավիրի մարզի Հացիկ գյուղի 4-րդ փողոց 9 շենք 1 բնակարան հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ քաղաքացի Դավիթ Միհրանի Իսկանդարյանի (ծնված 27.05.1962 թվականին) իրավունքը՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը համաձայն Արմավիրի մարզի Նոտարական գրասենյակի գրանցված գրանցամատյան 5985, ժառանգության գործ 623 վկայականի հիման վրա, 0.08 հա օրինական տնամերձ հողամասի վրա գտնվող թիվ 1 բնակելի տան՝ 90.1 քառ.մ (կառուցված 1967թ.), նկուղի՝ 14.35 քառ.մ (կառուցված 1967թ.), աստիճանների՝ 3.9 քառ.մ (կառուցված 1967թ.), 3 ավտոտնակի՝ 21.1 քառ.մ (կառուցված 1975թ.), 4 սանհանգույցի՝ 6.4 քառ.մ

(կառուցված 1975թ.), 5 խոհանոցի՝ 14.0 քառ.մ (կառուցված 1976թ.), 6 մառանի՝ 12.3 քառ.մ (կառուցված 1976թ.), և 8 պարսպի՝ 0.9 քառ.մ (կառուցված 1996թ.), նկատմամբ:

2. 2002 թվականին կառուցված 28.9 քառ. մ մակերեսով 2 ծածկը, և թիվ 7 կաթսայատունը՝ 2.5 քառ. մ (կառուցված 1975թ.) համարել ինքնակամ:
3. 011-016 ծածկագրով 0.08հա հողամասին կից 0.016հա ավել տարածքը, որը չի գերազանցում տնամերձ հողամասի 20%-ը, չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1,2,3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, սեփականության իրավունքով հատկացնել անհատույց Դավիթ Իսկանդարյանին:
4. Առաջարկել ՀՀ ԿԱ Ա.Գ.Կ.Պ.Կ. համապատասխան տարածքային ստորաբաժանմանը գրանցել քաղաքացի Դավիթ Միհրանի իսկանդարյանի (ծնված 27.05.1962 թվականին) գույքային իրավունքը՝ճանաչելով նրա սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի տան և շենք- շինությունների նկատմամբ և տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. Եղիազարյան

գ. Հացիկ

05.09.2018թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՀԱՑԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Հացիկ համայնք, 16 փողոց, 1շենք, 093 08 08 48
hacikiguxapetaran@inbox.ru

«05» սեպտեմբերի 2018 թվականի

ՈՐՈՇՈՒՄ N 58

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՀԱՍՑԵԻ ՎԵՐԱՆՎԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 17-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային և (կամ) տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2006 թվականի հուլիսի 3-ի N7 որոշումը

Որոշում եմ

1. Արմավիրի մարզի Հացիկ համայնքի բնակիչ Դավիթ Միհրանի Իսկանդարյանին (ծնված 27.05.1962թ.) պատկանողժառանգության իրավունքով ձեռք բերված բնակելի տանը՝ (ծածկագիր 04-058-011-016) տալ հասցե Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հացիկ համայնքի 4-րդ փողոց 9 շենք 1 բնակարան:
2. Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի Արմավիրի տարածքային ստորաբաժանում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

գ. Հացիկ 05.09.2018թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՑԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Հացիկ համայնք, 16 փողոց, 1շենք, 093 08 08 48
hacikiguxapetaran@inbox.ru

«06» սեպտեմբերի 2018 թվականի

ՈՐՈՇՈՒՄ N 59

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԵՆՔ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով այն հանգամանքը որ Ստելլա Լեմենդիրի Եղիազարյանը՝ ծնված 1964 թվականին, Լուսինե Կամոյի Մկրտչյանը՝ ծնված՝ 1982 թվականին , Անահիտ Կամոյի Մկրտչյանը ՝ ծնված՝ 1983 թվականին, Հացիկ համայնքի 16 փողոց 3 նրբանցք 5 շենք թիվ 2 բնակելի տան սեփականատեր են դարձել ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի հիման վրա 24.08.2018թ. սեղանամատյան N 5792 դիմել են Հացիկ համայնքի 16 փողոց, 3 նրբանցք, 5 շենք, թիվ 2 հասցեում գտնող իրենց պատկանող 0.14 հա օրինական հողամասին կից օգտագործվող 0.0268 հա հողամասի, օրինական հողամասի վրա կառուցված բնակելի տան և բնակելի նշանակության օժանդակ շենք շինությունների նկատմամբ իրավունքը վերականգնելու խնդրանքով:
Բնակելի տունը և շենք շինությունները կառուցվել են մինչև 15.05.2001թ., հողամասը ընդգրկված չէ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի, «Տեղական Ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 64-րդ հոդվածի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի, ՀՀ կառավարության 13.11.2008թ. թիվ 1328-Ն որոշումը

Որոշում եմ

1. Վերականգնել Արմավիրի մարզի Հացիկ համայնքի 16 փողոց, 3 նրբանցք, 5 շենք թիվ 2 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ քաղաքացիներ՝ Ստելլա Լեմենդիրի Եղիազարյանի՝ ծնված 1964 թվականին, Լուսինե Կամոյի Մկրտչյանի ծնված՝ 1982 թվականին, Անահիտ Կամոյի Մկրտչյանի՝ ծնված 1983 թվականին և Կարապետ Կամոյի Մկրտչյանի ծնված 1987 թվականին, սեփականության իրավունքը 0.14 հա և ավել օգտագործվող 0.0268 հա հողամասի վրա կառուցված
   բնակելի տան 67.50 մ^2 մակերեսով կառուցված 1986թ.-ին
   բնակելի տան 48.80 մ^2 մակերեսով կառուցված 1986 թ-ին
   բաց պատշգամբի 20.90 մ^2 մակերեսով կառուցված 1986թ-ին
   ծածկոցի 54.60 մ^2 մակերեսով կառուցված 1986 թ-ին նկատմամբ

2. նախկինում կառուցված N4 շինությունը քանդվել է:
3. Ավել օգտագործվող 0.0268 հա հողամասը, որը ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողերի ցանկում, հատկացնել անհատույց սեփականության իրավունքով:
Բնակելի տունը բավարարում է «ՀՀ համայնքային վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 1 և 2 հոդվածների պահանջները: Հողամասը չի ընդգրկված ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողերի ցանկում: Կառույցները չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ:
4. Առաջարկել ՀՀ ԿԱ Ա.Գ.Կ.Պ.Կ. համապատասխան մարզային ստորաբաժանմանը գրանցել Ստելլա Լեմենդիրի Եղիազարյանի՝ ծնված 1964 թ-ին, Լուսինե Կամոյի Մկրտչյանի՝ ծնված 1982 թ-ին, Անահիտ Կամոյի Մկրտչյանի՝ ծնված 1983թ-ին և Կարապետ Կամոյի Մկրտչյանին՝ ծնված 1987 թվականին սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետով նշված հողամասի և հողամասում առկա բնակելի տան և շենք շինությունների նկատմամբ, տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. Եղիազարյան

գ. Հացիկ

06.09.2018թ.